Հայոց լեզվի և (հայ) գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Անձի և արժեհամակարգի ձևավորումը և ստեղծագործական կարողությունների խթանումը հեքիաթի միջոցով

Կատարող՝ Նարինե Սաֆարյան

Դպրոց՝ «Երևանի հ. 98 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան № 65 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն _____3

Գլուխ 1

1.1 Ի՞նչ է հեքիաթը _____5

1.2 Հեքիաթներ կարդալու կարևորությունը_____8

Գլուխ 2

2.1 Հեքիաթների միջոցով անձի և արժեհամակարգի ձևավորումը—12

Գլուխ 3

3.1 Ստեղծագործական կարողությունների ձևավորման մեթոդներն ու հնարները՝

- Հեքիաթաթերապիա_____15
- Հեքիաթն իբրև <<դեղամիջոց>>_____16

Հայտորոշիչ թեստի արդյունքների վերլուծություն_____18

Եզրակացություն _____19

Օգտագործված գրականության ցանկ _____20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականությունը կարևոր դեր է խաղում մեր կյանքում: Հեքիաթները որպես մանկական գրականության մաս կարող են արժեքավոր աղբյուր հանդիսանալ երեխայի ստեղծագործական կարողությունների խթանման համար: Հեքիաթները կարելի է համարել լրացուցիչ ուսումնական նյութերից մեկը: Ոչ միայն առեղծվածի, հուզմունքի և հրաշքի մթնոլորտն է, որ հեքիաթներն այդքան յուրահատուկ և արժեքավոր է դարձնում, այլև դրանք կարող են ողջ կախարդական աշխարհը բերել երիտասարդ ընթերցողին և սովորողին: Նրանք կարող են բացել մարդկության հին իմաստությունն ու գիտելիքները, որոնց մասին մենք հաճախ մոռանում ենք: Հեքիաթները կարող են նպաստել երիտասարդ ընթերցողի գիտելիքների հարստացմանը մի շարք առումներով: Նրանք սովորեցնում են բարոյական արժեքներ՝ ընդգծելով լեզվի գոյության համընդհանուր նորմերն ու չափանիշները: Բացի այդ, հեքիաթները տեքստի որոշակի տեսակ են, որը կարող է հարմարեցվել երեխայի տարիքին համապատասխան, մինչդեռ դրանց նախադասությունների և սյուժեի կազմը պարզ և հասկանալի է: Հեքիաթը մի պատմություն է, որը ներառում է բանահյուսական առանձնահատկություններ, ինչպիսիք են փերիները, կախարդները, իշխանները և արքայադուստրերը: Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ենթադաս է: Ամենահին հեքիաթները պատմվել ու վերապատմվել են սերունդներից, նախքան դրանք գրվելը: Երբ այս պատմությունները մանրակրկիտ ուսումնասիրվեցին, պարզվեց, որ Մոխրոտի պատմության մեկից ավելի, նույնիսկ 10-ից ավելի տարբերակներ կան: Յուրաքանչյուր պատմություն, ըստ երևույթին, ուներ յուրահատուկ պատմողական և մշակութային տարրեր, որոնք կախված էին պատմության պատմվելու վայրից և ժամանակից: Մեր օրերում տարբեր հեղինակներ դեռ սիրում են հեքիաթների նոր տարբերակներ հորինել և գրի առնել:

Հետազոտության արդիականությունը.

Դասագրքերում բացառիկ տեղ ունի հեքիաթը, որը դպրոցականների սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում: Հեքիաթի միջոցով նոր մատուցվող նյութը դառնում է ավելի գրավիչ և դրա յուրացումը մեծացնում է նրա դաստիարակչական,

ուսուցողական, ճանաչողական նշանակությունը, խթանում դպրոցականի երևակայության զարգացումը և զարգացնում է բառապաշարը:

Հեքիաթի արտասովոր միջավայրում երեխաները ծանոթանում են ժողովրդական իմաստության այս տեսակին, տարբեր ժողովուրդների հեքիաթների առանձնահատկություններին, հեքիաթագիրներին և գույների ներկապնակի միջոցով փորձում են կերտել իրենց հեքիաթը:

Հեքիաթը մեծ դեր կարող է խաղալ ստեղծագործելու կարողությունների ձևավորման համար, քանի որ սիրելով այն՝ երեխան մեծ հաճույքով և առանց բարդույթների, ազատորեն կարող է վերարտադրել սեփական մտքերը, հատկապես այն ժամանակ, երբ հանձնարարվում է շարունակել հեքիաթը:

Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման լավագույն միջոց է կիսատ թողած հեքիաթի շարունակությունը հորինելու հնարը: Այս հնարով լուծվում են մի շարք խնդիրներ. հարստանում և ակտիվանում է աշակերտի բառապաշարը, երեխայի մոտ ձևավորվում են հորինելու, նմանակելու ունակությունները, մշակվում է խոսքի կուլտուրան, ձևավորվում են ստեղծագործական կարողությունները և հմտությունները, և ամենակարևորը՝ երեխան ձերբազատվում է իր բարդույթներից: Եվ, վերջում աշակերտները փորձում են մեկնաբանել հեքիաթը. թե ինչ սովորեցին, ինչն էր նոր նրանց համար, ինչ լավ բաներ կային դրանում: Այս մեկնաբանության միջոցով փորձում ենք երեխաների մեջ ձևավորել նաև համագործակցության, համախմբվածության և փոխզիջման ունակություններ:

Հետազոտության նպատակը.

Աշխատանքի նպատակը մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների՝ դպրոցականների անձի ձևավորման, դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձեւավորման, զարգացման վրա ներգործության բացահայտումն է:

Հետազոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն
2. հիմնավորել հեքիաթների բացառիկ նշանակությունը արժեհամակարգի և անձի ձևավորման գործում

3. մատնանշել հեքիաթների անմիջական ազդեցությունը և կարևորությունը աշակերտի գիտելիքների զարգացման գործում

Գլուխ 1

1.1 Ի՞նչ է հեքիաթը.

Հեքիաթը բանահյուսության ժանրերից է, որտեղ հերոսները և դեպքերը պատկերված են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ՝ հրաշապատում ձևերով: Համաշխարհային բանագիտության մեջ տարբեր տեսություններ ու կարծիքներ կան հեքիաթի ծագման ու ձևավորման վերաբերյալ: Հեքիաթը կարճ պատմություն է՝ ավելի հաճախ բանահյուսական կերպարներով, ինչպիսիք են թզուկները, էլֆերը, փերիները, հսկաները, թզուկները, ջրահարսները, միաեղջյուրները կամ վհուկները: Հեքիաթներում հաճախ հանդիպում է կախարդանք կամ մոգություն: Դրանք հաճախ շփոթվում են այլ բանահյուսական նմանատիպ ժանրերի հետ, օր՝ լեգենդները, առասպելները: Վերջիններիս ներառած պատմություններում սովորաբար առկա է ճշմարտության նշույլ: Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Միաժամանակ այդ բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր և այլն: Հեքիաթի թեմաներն անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ: Հեքիաթները խթանում են ընթերցանությունը: Հայտնի փաստ է, որ մինչ համակարգիչների և հեռուստատեսության հայտնագործումը, ընթերցանությունն ազատ ժամանակի առաջնային զբաղմունքն էր: Մարդիկ կարող էին ժամերով կարդալ և ճանապարհորդել մտքից հեռու գտնվող երկրներ: Պատմություններն առաջարկում են ամբողջ երևակայական աշխարհը, որը ստեղծվել

է լեզվով, որտեղ երեխաները կարող են մուտք գործել և վայելել, սովորելով լեզուն կարդալիս: Լավ պատմությունները ապահովում են համընդհանուր արժեքների և կարիքների ուսումնասիրություն, գրավում ուսանողների հետաքրքրությունը ու մարտահրավեր նետում նրանց՝ բացահայտելու իմաստի նոր ուղիներ: Հեքիաթների օգնությամբ երեխաները նկատում են լեզվական այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են անցյալ ժամանակները, ածականները, համեմատականները և այլն: Ուսուցիչները կարող են օգտագործել հեքիաթից հատվածներ՝ մատնանշելու քերականական առանձնահատկությունները: Օրինակ՝ խնդրել ուսանողներին գտնել 6 բայ, գրել բոլոր ածականները կամ գտնել այն բառերն ու արտահայտությունները, որոնք ցույց են տալիս դիրքը տեղում կամ ժամանակի մեջ: Շարունակական իմաստներով տեքստերն ավելի վավերական են, քան կապակցված նախադասությունները, որոնք հաճախ օգտագործվում են որպես օրինակ քերականության գրքերում: Պատմվածքների գրքերը հաճախ պարունակում են երկխոսության ընդարձակ օրինակներ, որոնք օգտագործում են կետադրական նշանների լայն տեսականի, ավելի բնական համատեքստում, քան դա հնարավոր է քերականական վարժությունների գրքերում: Բառերի դասավորությունը կարելի է սովորեցնել նաև հեքիաթներ կարդալու միջոցով: Խմբերով աշխատելիս ուսանողները կարող են տալ և պատասխանել բովանդակությանը վերաբերող հարցերին և սովորել հարցերի և հաստատական նախադասությունների բառային կարգը:

Հեքիաթը հորինված կերպարներով և սյուժեով պատմվածք է, որն ունի առօրյա, հերոսական կամ կախարդական բնույթ: Դրանց մեջ ժողովուրդն արտահայտում է իր նվիրական երազանքներն ու ձգտումները: Այն ինչ կյանքում անհնար է եղել իրականացնել, մարդիկ ցանկացել են իրականացած տեսնել հեքիաթներում: Հեքիաթների դերը երեխաների կյանքում բազմազան է. դրանք զարգացնում են երևակայությունը, մտածողությունն ու նույնիսկ ճիշտ խոսքը: Դեռ հին դարերից հեքիաթները մնում են յուրաքանչյուր երեխայի դաստիարակման անբաժան մասը: Դրանք օգնում են ծնողներին մատչելի լեզվով երեխային ծանոթացնել կյանքին, չարի և բարու հետ: Հեքիաթներն երեխաների համար ավելի հասկանալի են, քան մեծահասակների բարդ ու խճճված զրույցները: Այդ իսկ պատճառով, երեխաներին որևէ բան բացատրելու համար, ծնողները դիմում են հեքիաթների օգնությանը:

Երեխաների կյանքում այն շատ կարևոր տեղ է զբաղեցնում: Նրա օգնությամբ երեխաները սկսում են վաղ խոսել և իրենց մտքերը ճիշտ ու գրագետ արտահայտել: Հեքիաթները նաև նպաստում են լավ վարքի դրսևորմանը, այլ անձանց հետ շփման կարողությանը: Հեքիաթի դերը երեխայի դաստիարակության գործում անհնար է չնկատելը: Երեխաները սովորում են հասկանալ հերոսների ներաշխարհը, վերապրել նրանց անցած ուղին: Սովորում են հավատալ բարու արդարամիտ և հաղթական ուժին: Հեքիաթների շնորհիվ կարելի է ոչ միայն հետաքրքիր ու օգտակար ժամանակ անց կացնել, այլ նաև երեխայի անհանգստությունը վերացնել: Այն օգնում է հարստացնել երեխայի բառապաշարը, ինչպես նաև խթանում կապակցված խոսքը: Հեքիաթի շնորհիվ երեխայի խոսքը դառնում է ավելի զգայական ու գեղեցիկ: Այս կախարդական պատմությունները ձևավորում են հարցեր տալու ունակությունը, բառակապակցություններ ու նախադասություններ կազմելու հմտությունը: Երեխաների կյանքում հեքիաթների կարևորագույն դերերից մեկն այն է, որ այնտեղ միշտ բարին է հաղթում: Հետագայում դա երեխային կօգնի սովորել հաղթահարել կյանքի դժվարությունները: Կյանքն, իհարկե, իր ուղղումները կմտցնի, բայց, այնուամենայնիվ, երեխայի ենթագիտակցության մեջ ոչինչ չի կորում: Միևնույն հեքիաթը կարելի է և պետք է կարդալ մի քանի անգամ: Դա կնպաստի, որ երեխան ճիշտ ըմբռնի հեքիաթում ներդրված իմաստը: Որպես կանոն, երբ երեխան ամբողջությամբ ընկալում է հեքիաթի իմաստը, նրա հետաքրքրությունը կորում է դրա նկատմամբ: Բացի այդ, յուրաքանչյուր երեխա հեքիաթի մեջ գտնում է այն, ինչն իրեն հետաքրքիր է: Երեխայի համար հեքիաթների կարեւորության, նշանակության մասին կարելի է խոսել անվերջ: Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի եւ անփոխարինելի է: Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և կրեատիվ»: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր:

Զևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն: Ինչ վերաբերում է հեքիաթների ուսուցման մեթոդներին, ապա դրանցից կարելի է առանձնացնել ու մատնանշել «Ուղղորդվող (կամ ընդհատումներով) ընթերցանության» մեթոդը, որը հնարավորություն է տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ: «Ուղղորդվող ընթերցանության» մեթոդի հիմքում ընկած է ընթերցանության գործընթացի դիտարկումը: Ի վերջո, ինչպե՞ս են կարդում հմուտ, ընթերցողական կուլտուրային տիրապետող մարդիկ: Կարդում են տեքստի մի հատված, դադար են տալիս՝ մտքում ծանրութեթև անելու, իրենք իրենց հարցեր տալու, պատասխաններ որոնելու, շարունակության մասին կանխատեսումներ անելու նպատակով:

1.2 Հեքիաթներ կարդալու կարևորությունը.

Հեքիաթներ կարդալը կարևոր և անհրաժեշտ է.

1. Հեքիաթն ամենից հասկանալի միջոցն է երեխայի համար՝ պարզելու, թե ինչ է կյանքը և ինչպես «վարվել»:
2. Մարդկանց և կյանքի իրավիճակների միջև հարաբերությունները հեքիաթում են՝ սեր, ընկերություն, խաբեություն, ուրախություն, տխրություն և այլն:
3. Հեքիաթային պատկերները միանշանակ են՝ լավ, վատ, բարի, չար, ագահ, առատաձեռն, խելացի, հիմար: Երեխայի համար անհասկանալի «կիսատոններ» չկան:
4. Հեքիաթում լավը միշտ հաղթում է: Եվ սա անհրաժեշտ է երեխայի համար, որպեսզի չվախենա: Երբ վստահ ես, որ բարին կհաղթի, համարձակորեն առաջ ես գնում:
5. Հեքիաթում իշխում են բարի գործերը՝ աշխատասիրությունը, խելքը, առատաձեռնությունը: Երեխայի համար հեշտ է հասկանալ, թե ինչ պետք է լինի, որպեսզի ամեն ինչ ստացվի:
6. Երեխան, ով հավատում է հեքիաթներին, հավատում է լավին, և դա օգնում է նրան ժպտալ աշխարհին և չվախենալ:
7. Հեքիաթներում՝ դարերի իմաստություն, որն այնքան է պակասում ժամանակակից փոքր-ինչ «նյութական» աշխարհում:

Ի՞նչ է սովորում աղջիկը հեքիաթներից. պետք է լինել բարի և աշխատասեր, ինչպես Մորոզկոյից Նաստենկան: Դուք պետք է կարողանաք հոգ տանել, օգնել ուրիշներին, ցանկանալ մարդկանց երջանկություն: Որովհետև հեքիաթի վերջում ծույլ ու նախանձ չար աղջիկները միշտ ստանում են այն, ինչին արժանի են: Պետք է երախտապարտ լինել: Ինչպես «Սագ-կարապներ» հեքիաթի մի աղջիկ, որը խնձորի ծառին շնորհակալություն էր հայտնում խնձորների համար, վառարանին՝ կարկանդակների համար: Ժամանակակից երեխաները սովոր են ամեն ինչ միանգամից ստանալ: Իսկ հեքիաթներում ոչինչ հենց այնպես չի տրվում, ու պետք է կարողանալ «շնորհակալություն» ասել: Փեսան ստուգման կարիք ունի: Արդյո՞ք արքայազնը կկարողանա հաղթահարել բոլոր դժվար փորձությունները հանուն արքայադստեր: (Սա, իհարկե, երեխաների համար չէ, բայց օգտակար իմաստությունը դեռ կպահվի գլխում):

Ի՞նչ է սովորում տղան հեքիաթներից. պետք է լինել ազնվական: Օգնիր թույլերին, հոգ տար: Արքայազնը, ով օգնում է պիկերին, տալիս է իր ճաշը և փրկում ինչ-որ մեկին, ի վերջո նա անպայման փոխադարձ օգնություն կստանա փորձությունների ժամանակ: Մի վախեցեք դժվարություններից: Բոլոր հեքիաթներում տղամարդիկ առանց վարանելու գնում են ճամփորդությունների, որոնումների կամ թեստերի ենթարկվում: Մարդը չի վախենում, մարդը պատրաստ է հաղթահարել դժվարությունները, ռիսկի դիմել, նույնիսկ այն, ով առաջին անգամ պառկած էր վառարանի վրա: Հենց այս հատկանիշները կօգնեն տղային ապագայում իրեն տղամարդ զգալ: Ինչպես հեքիաթն է աղջիկներին սովորեցնում փեսաներին փորձարկել, այնպես էլ հեքիաթը սովորեցնում է տղաներին փորձարկել հարսնացուներին: Կկարողանա՞ բոքոն թխել, տունը մաքրել, շոր կարել: Կինը պետք է լինի տնտեսական և խելացի: Ահա թե ինչ է սովորեցնում հեքիաթը:

Հեքիաթները զգայարանները դաստիարակելու ամենամատչելի միջոցներից են: Նման ստեղծագործությունների վառ փոխաբերություններն ու էպիթետները օգնում են փոխանցել կերպարների հուզական վիճակների շրջանակը, նկարագրել բնության հարստությունը: Սա կօգնի երեխաների մեջ սեր սերմանել սիրելիների և հարգանք՝ աշխարհի նկատմամբ: Կախարդական պատմությունների հերոսների վարքագծի օրինակով կարելի է երեխային ասել, թե ինչու է անհրաժեշտ լավ ուտել և

քնել, լողանալ և լվանալ ատամները: Հեքիաթը կարող է մեղմորեն երեխաներին բացատրել սիրելիների կորստի կամ սիրելի կենդանիների մահվան իրականությունը:

Ինչու՞ են հեքիաթներն այդքան անհրաժեշտ մեր կյանքի որոշակի պահին: Ինչո՞ւ են դրանք դառնում մեր զարգացման որոշակի շրջանի անբաժանելի մասը: Հոգեվերլուծական տեսանկյունից հեքիաթներն օգնում են երեխային հաղթահարել մեծանալու դժվարությունները և հաղթահարել բնականոն զարգացման ճգնաժամերը: Երեխան պետք է հասկանա ինքն իրեն, իր կարիքներն ու հնարավորությունները աշխարհի հետ հաղորդակցվելու համար, որտեղ նա ապրում է: Նա կարիք ունի հասկանալ, ինչպես հաղթահարել այն հույզերն ու զգացմունքները, որոնք լցնում են նրան, և դրանք դնում որոշակի կարգի: Նա նաև պետք է ծանոթանա բարոյականության հասկացությանը՝ ոչ թե չոր դիդակտիկ ձևով, այլ ամենօրյա իրական պատկերով, որը կլցվի մի իմաստով, որը կհիշվի ողջ կյանքի ընթացքում: Եվ սա այն է, ինչ երեխան ստանում է հեքիաթի միջոցով: Հեքիաթները կերակրում են երեխաների երևակայությունը: Նրանք օգտագործում են երեխաներին մոդելային իրավիճակները ներկայացնելու անուղղակի ձև և, հետևաբար, գրավում են երեխաների երևակայությունը: Երեք անհաջող փորձերի մոտիվը հաճախ հանդիպում է հեքիաթներում: Այս մոդելային իրավիճակը մատնանշում է երեխաներին ուղղված կարևոր ուղերձը, որ հաջողությունը չի գալիս առաջին փորձից, բայց եթե մենք համբերատար լինենք և չհանձնվենք, այն վերջում կգա: Այն երեխաներին տալիս է հույս և մխիթարություն, ինչպես նաև երջանիկ ավարտ: Հեքիաթների կերպարները կա՛մ լավն են, կա՛մ վատը: Բարու և չարի կտրուկ բաժանումն օգնում է երեխաներին հասկանալ տարբերությունը: Իսկ երեխաների համար հեշտ է ընտրել ճիշտ կողմը, քանի որ լավ կերպարը միշտ պարգևատրվում է, մինչդեռ վատ կերպարը միշտ պատժվում է: Ավելին, երեխաները հակված են ավելի հեշտ նույնականանալ լավ կերպարների հետ, ինչը նրանց մեջ արթնացնում է նույն դրական պահվածքի ցանկությունը, և, հետևաբար, հեքիաթները կարող են մեծապես նպաստել նրանց սոցիալական դաստիարակությանը: Երեխային դուր է գալիս, որ հեքիաթը պատմի նրան հաջողության հասնելու մասին: Հեքիաթը ամենից հաճախ սովորեցնում է կյանքի հիմնական արժեքները, ինչպիսիք են վստահությունը, հույսը, ազնվությունը, բարությունը և հավատը բարձր ուժի նկատմամբ, որոնք կարող են մեկնաբանվել

որպես հավատքի արմատ: Հեքիաթները քաղաքակիրթ հասարակության կարևոր արժեքներին հավատարիմ մնալու դրդապատճառներ են սերմանում: Այս արժեքներին ձգտելը դրդված և մոդելավորվում է այս հեքիաթներում, և հիմք է ստեղծվում իմաստալից կյանքին հասնելու հաջողության համար: Պատմությունները, ինչպես նաև հեքիաթները օգնում են երեխաներին հարգանք զգալ այլ երկրների և մշակույթների նկատմամբ և կարող են ընդլայնել նրանց գիտելիքները աշխարհի մասին: Հեքիաթները նաև զվարճալի են և կարող են շատ օգուտներ բերել ձեր երեխաներին: Ահա դրանցից մի քանիսը.

1. Վաղ գրագիտության զարգացում: «Եթե ուզում եք, որ ձեր երեխաները խելացի լինեն, կարդացեք նրանց հեքիաթներ: Եթե ուզում եք, որ նրանք ավելի խելացի լինեն, ավելի շատ հեքիաթներ կարդացեք նրանց համար»: Պատմությունը կարևոր դեր է խաղում վաղ գրագիտության զարգացման գործում: Այն հանդես է գալիս որպես գրագիտության հիմնական շինանյութ: Երեխաների երևակայությունը ավելի է զարգանում հեքիաթներ լսելու միջոցով: Դուք կարող եք երեխաներին ներգրավել քննարկելու, թե ինչպես կարող են այս պատմությունների ֆանտաստիկ երկիրը կամ զարմանալի աշխարհները տարբերվել կամ նման լինել մեր իրական աշխարհին: Ձեր երեխաների հետ նման շփվելու միջոցով, կօգնեք նրանց հեշտությամբ արտահայտել իրենց գաղափարները: Ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ կանոնավոր պատմություններ պատմելու գործունեությունը կարող է օգնել ընդլայնել երեխայի բառապաշարը:
2. Դրական խնդիրների լուծման հմտություններ: Երեխաները սովորում են պատմվածքների հերոսներից, և դա օգնում է նրանց իրավիճակը կապել սեփական կյանքի հետ: Պատմությունները ցույց են տալիս երեխաներին, թե ինչպես դրական հայացք ունենալ կյանքի ցանկացած անհանգստության, մարտերի և խնդիրների ֆոնին: Այն նաև նրանց սովորեցնում է քննադատական մտածողության հմտություններ:
3. Երեխաների ճկունության ձևավորում: Աշխարհն այսօր կարող է դիտվել որպես սարսափելի վայր: Շատ ընտանիքներ և հատկապես երեխաներ կարող են ահռելի սթրեսի ենթարկվել: Նման իրավիճակում երեխաները

պետք է գիտակցեն, որ բոլորի հետ վատ բաներ են պատահում: Հեքիաթները կարող են օգնել նրանց զարգացնել հուզական ճկունություն՝ օգնելով նրանց կապել պատմությունները իրական կյանքի խնդիրների հետ, որտեղ հերոսը հիմնականում հաղթում է: Այս պատմությունները ցույց են տալիս նրանց, որ մենք բոլորս անցնում ենք կյանքի մարտահրավերների միջով, և որ նրանք պետք է միշտ պատրաստ լինեն և հավատան, որ կարող են հաջողության հասնել կյանքում:

4. Մշակութային գրագիտություն: Երեխաների համար հեքիաթներ կարդալը կամ պատմելը ոչ միայն գրագիտության զարգացման հիմքն է, այլ նաև շեշտը դնում է տարբեր միջմշակութային արժեքների և վարքագծի վրա:
5. Հեքիաթները սովորեցնում են պատմվածքի հիմքը: Հեքիաթները հիանալի գործիքներ են երեխաներին պատմությունների զարգացման, կոնֆլիկտների լուծման, հերոսների, հերոսների և չարագործների զարգացման մասին սովորեցնելու և նրանց երևակայությունը պարզապես ընդլայնելու համար: Ավելին, այն օգնում է նրանց տարբերակել գեղարվեստական գրականությունը ոչ գեղարվեստական պատմություններից: Թեև դրանք հաճախ մոռացվում են, հեքիաթները պետք է դիտարկել որպես հավերժական: Որպես ծնողներ և ուսուցիչներ, լավ գաղափար է ուսումնասիրել, թե ինչպես կարող եք այս ժանրը ներկայացնել երեխաներին և թույլ տալ նրանց վայելել այն պատմությունները, որոնք դուք, ձեր ծնողները, տատիկներն ու պապիկները և այլն, պահպանել եք որպես մեր մշակույթի, պատմությունների, ավանդույթի մաս:

Գլուխ 2

2.1 Հեքիաթների միջոցով անձի և արժեհամակարգի ձևավորումը

Արդի մանկավարժության կարեւոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Հանրակրթության գլխավոր նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Այսինքն՝ առանցքային է համարվում սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: Ինչպես

ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային եւ էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման եւ զարգացման համար: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն

տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Մայրենիի դասերին հեքիաթների ուսումնասիրությունն օգնում է համատեղել գրական և լեզվական վերլուծության տարրերը: Մայրենիի դասավանդման դասի մեջ հեքիաթի ներմուծումը թույլ է տալիս վերլուծել խոսքի գործունեության տարբեր տեսակներ, որոնք պետք է կիրառվեն դասերին: Ժամանակակից մանկավարժական պրակտիկայում հատուկ ուշադրություն է դարձվում ուսուցման հաղորդակցական մեթոդին: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Արժեքները, ինչպես գիտելիքները, չեն փոխանցվում: Դրանք ձևավորվում են կյանքի փորձի արդյունքում, և այդ փորձի դաշտը ապահովելը մեծահասակների պարտականությունն է: Նորմերը, որոնք ձևավորվել են հասարակության մեջ, հանդիսանում են արժեհամակարգերի բարձրագույն դրսևորումները (այսինքն իշխող տեսակետներն այն մասին, թե որը համարել լավ, ճիշտ կամ ցանկալի): Արժեք և նորմ հասկացությունները տարբերվում են: Արժեքները՝ վերացական, ընդհանուր հասկացություններ են, իսկ նորմերը՝ որոշակի իրավիճակներում մարդկանց վարվելակերպի կանոններն են կամ առաջնորդող սկզբունքները: Արժեհամակարգ ձևավորվելով հասարակության մեջ, մեծ դեր են խաղում, քանի որ ազդում են նորմերի վրա: Արժեքներ կարող են համարվել. առողջությունը, սերը, ընտանիքը, երեխաները, տունը, մտերիմները, ընկերները, շփումը, ինքակառավարումը աշխատանքի մեջ, աշխատանքից հաճույք ստանալը, նյութական բարեկեցությունը, հոգևոր արժեքները, հոգևոր աճը, կրոնը, ժամանցը՝ հաճույք, հոբբի, զվարճանք, ստեղծագործական ինքնադրսևորումները, ինքնակրթությունը, սոցիալական կարգավիճակը և դիրքը

հասարակության մեջ, ազատությունը (խոսքի, ընտրության և այլն), կայունությունը։ Կարող են լինել նաև այլ արժեքներ։ Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը տարբեր է։ Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը։ Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում։ Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասվածը։ Արժեքն երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել։ Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն։ Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել։ Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը։ Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման։ Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ։ Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։ Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։

Գլուխ 3

3.1 Ստեղծագործական կարողությունների ձևավորման մեթոդներն ու հնարները.

Ի՞նչ է հեքիաթաթերապիան.

Հեքիաթաթերապիան պրակտիկ հոգեբանության ուղղություններից մեկն է։ Սա հեքիաթ պատմելու կամ կարդալու սովորական գործընթաց չէ։ Հեքիաթաթերապիայի ընթացքում պատմվող հեքիաթը ունենում է շտկողական նպատակ։ Հեքիաթաթերապիայի կողմից ընտրված հեքիաթները հիմնականում ունենում են թերապևտիկ ուղղվածություն՝ այս կամ այն խնդիրը (ագրեսիա, վախ, կոնֆլիկտ և այլն) լուծելու, վերացնելու։

Հեքիաթաթերապիայի դերը մեծ է նրանով, որ.

1. Երեխայի մոտ այնպիսի զգացողություն է առաջանում, որ մենք իրեն հասկանում ենք և «կանգնած» չենք հեռվում, այլ պատրաստ ենք օգնելու իրեն: Հեքիաթաթերապիայի ժամանակ երեխայի մոտ ձևավորվում է ինքնաօգնության մեխանիզմ, այսինքն՝ իրականանում է հեքիաթաթերապիայի հիմնական գաղափարը, այն է՝ ռեսուրսներ գտիր ինքդ քո մեջ:
2. Երեխայի մեջ սերմանում ենք դժվար իրադրություններում ելքային տարբերակները գտնելու կարողություն՝ հեքիաթների նման բարի ավարտով:
3. Հեքիաթաթերապիայի կարևոր ֆունկցիաներից է նաև շփման հարցում ծագած հակասությունների վերացումը:
4. Հեքիթաթերապիայի կարևոր դերերից մեկն էլ նրա «էներգահաղորդիչ» լինելն է, այսինքն՝ «յուրաքանչյուր հեքիաթ իր մեջ կրում է մարդու ներաշխարհում կատարվող բոլոր պրոցեսների զարգացումը» (Киселева М. В. Арм-терапия в работе с детми, 2006):
5. Այն հանրամատչելի է, այսինքն նույնիսկ տնտեսուհի-մայրիկը՝ խելամիտ ձևով ընտրված հեքիաթի միջոցով, կարող է օգնել իր երեխային:
6. Այն արդյունավետ է: Այդ արդյունավետությունը կայանում է նրանում, որ հեքիաթն ունի լավ վերջաբան, որը երեխայի մեջ առաջացնում է հոգեբանական պաշտպանվածության զգացողություն:

Հեքիաթն իբրև «դեղամիջոց».

1. Ինչպես գիտենք, ***ագրեսիվ վարք*** են ցուցաբերում այն երեխաները, որոնք սեփական անձը ցածր են գնահատում ու ագրեսիվությունը միայն միջոց է դառնում, որ հակառակը ապացուցեն:
2. ***Վախերը*** և ***տագնապային պահերը*** կարող են առաջանալ յուրաքանչյուր երեխայի մոտ: Եվ այստեղ այդքան էլ կարևոր չէ, թե ինչպես է վախենում: Եթե երեխան վախենում է, և այդ վախերը օգտագործում է ինքնազարգացման համար, ապա՝ ամեն ինչ կարգին է: Եթե վախը «արգելակում է» նրա զարգացումը և գրավում է երեխայի ողջ ուշադրությունը, ապա նրան պետք է օգնել:
3. Յուրաքանչյուր տարիք երեխայի համար բերում է նոր դժվարություններ. ***նախադպրոցական տարիքում*** երեխան վախենում է «մենակությունից» և հարց է ծագում, թե ինչ է անելու առանց մայրիկի: Հետո գնում է դպրոց և մեծ թափով

երեխայի գլխին են թափվում բազմաթիվ խնդիրներ՝ կապված <u>ուսման ռեժիմի</u> և այլնի հետ: ***<u>Դեռահասն</u>*** էլ ցանկանում է կայանալ որպես ինքնուրույն անձնավորություն:

Այս բոլորը կապված են տարիքային առանձնահատկությունների հետ: Այս ճգնաժամային իրավիճակներում առաջացած հակասությունների կոնֆլիկտների շտկման հարցում ծնողին, մանկավարժին, հոգեբանին կարող է օգնության գալ հեքիաթը՝ իբրև «դեղամիջոց», որն անվնաս է և արդյունավետ: Շատ կարևոր է հեքիաթներն ընտրել երեխայի տարիքին համապատասխան:

Ինչպե՞ս պատմել հեքիաթը

Շատ հաճելի է հեքիաթը լսել, բայց ավելի հաճելի է այն պատմելը: Շատ ծնողներ, դաստիարակներ, մանկավարժներ երեխաների համար հեքիաթներ են կարդում կամ պատմում, բայց որպես հեքիաթաթերապիայի ձև՝ այն պատմելը պետք է ունենա իր յուրահատուկ ձևը:

<u>Հեքիաթը պատմվում է խմբի կամ մեկ մարդու համար</u> III դեմքով (պատմում է մեծահասակը): Այս դեպքում շատ կարևոր են դերասանական կարողությունները: Պատմելու ընթացքում կարևոր է՝ երեխան զգա, որ այն տպավորիչ է, ինչպես ֆիլմը, մուլտֆիլմը: Թերևս յուրաքանչյուր հեքիաթ պատմող մարդ պատմում է գիտակցաբար շեշտադրումը դնելով այն տեղում, որը համապատասխանում է խնդրի հետ: Սա շտկողական նպատակ ունի և պատմողը անպայման պետք է նախապես ծանոթ լինի պատմվելիք նյութի հետ ու ընտրի «խնդրին» համապատասխան հեքիաթ: Կարելի է սկսել այսպես. «Սիրելի՛ երեխաներ…» կամ «Հեքիաթային հերոսներ, այսօր մենք ընկել են կախարդական աշխարհ…»: Կարելի է պատմել նաև I դեմքով, այս դեպքում պատմողը ներկայանում է ինչպես ականատես և կարող է նկարագրել իր զգացմունքները, որոնք իբր առաջացել են այս կամ այն հեքիաթային իրավիճակում: Երեխաները կարող են լսել՝ նստած, շրջանաձև (ցանկալի է հանգիստ երաժշտության ներքո):

<u>Հեքիաթը պատմում է խումբը,</u> այս դեպքում հեքիաթը պատմում է, ոչ թե մեկը, այլ՝ խումբը: Առաջարկվում է պատմել այն հեքիաթը, որը ծանոթ է խմբի բոլոր անդամներին: Յուրաքանչյուր մասնակից հերթով պատմում է հեքիաթից մի հատված (սա շատ հարմար է 6-7 երեխաների խմբում): Երեխան ազատ կարող է պատմել

հեքիաթի որ մասը, որ կցանկանա: Ցանկալի է, որ հեքիաթը սկսի պատմել ակտիվ մասնակից, իսկ մնացածը՝ կշարունակեն: Հնարավոր է նաև, որ ինչ-որ հայտնի հեքիաթ սկսեն պատմել և հոգեբանի (մասնագետի) ցուցումով հաջորդ մասնակիցը նոր հատված հորինի:

Հեքիաթը հորինում են խմբով: «Լինում է, չի լինում…» սկսում է մեկը, իսկ մյուսը՝ շարունակում է, հաջորդը չի կրկնում՝ նոր շարունակություն է հորինում: Անպայման հեքիաթը պետք է ունենա վերջաբան:

Հեքիաթի հորինում նկարի միջոցով: Հոգեբանը ցույց է տալիս հեքիաթների հերոսների նկարներ և երեխան կամ երեխաները սկսում են հեքիաթ հորինել՝ այդ նկարների շուրջ: Սա օգնում է, որ երեխաների մոտ զարգանա երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, ինչպես նաև զարգացնում է խոսքը ու լսելու ունակությունը:

Հեքիաթը վերարտադրում են նկարի միջոցով: Այս դեպքում հեքիաթը պատմելուց հետո երեխաները փորձում են «նկարել» տվյալ հեքիաթը միասին: Յուրաքանչյուրը նկարում է իր կողմից պատմած հեքիաթային աշխարհից մի կտոր: Այն օգնում է, որ խումբը կարողանա հեշտ համագործակցել:

Ինչպե՞ս օգնել երեխային հեքիաթ հորինել կամ զբաղվել հեքիթաթերապիայով.

Երևի, յուրաքանչյուրս մեր կյանքում մեկ անգամ հորինել ենք հեքիաթ, առակ, կատակ կամ էլի ինչ-որ պատմություն: Հեքիաթ, պատմություն հորինելը ինքնստինքյան հոգեթերապևտիկ զբաղմունք է: Հաճախ երեխայի ֆանտազիան, վառ երևակայությունը օգնում է, որ նա ինքնաթերապիայով զբաղվի (իհարկե առանց գիտակցելու): Հորինված հեքիաթը, պատմությունը հաճախ արտացոլում է հոգու ներքին իրավիճակը:

Ինչպե՞ս օգնել երեխային. օրինակ երեխային առաջարկում ենք 10 բառ (գոյականներ)՝ տիեզերք, սիրտ, աթոռ, երգ, լամպ, զինվոր, թագավոր, հրահանգ, գիրք, նկարիչ (քարտերի միջոցով) և տալիս ենք 5 րոպե ժամանակ, որպեսզի մտքում հորինի պատմություն՝ օգտագործելով այդ բառերը: Սա նպաստում է և՛ մտածողության զարգացմանը, և՛ ներքին հակասությունների վերացմանը:

Հայտորոշիչ թեստի արդյունքների վերլուծություն.

Հետազոտության նպատակն է պարզել, թե ինչ արժեհամակարգ ձևավորվեց երեխաների մոտ։ Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված է միջնակարգ կրթության 8 առանցքային կարողունակություններ։ Չափորոշչում կարողունակությունը գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը հնարավորություն է տալիս սովորողին պատշաճ եւ արդյունավետ կերպով արձագանքելու իր տարատեսակ կարիքներին։ Այս աշխատանքի միջոցով մենք զարգացնելով ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը ձևավորեցինք հետևյալ արժեքները.

- Արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները
- Հարգանք
- Քաղաքացիական մտածողություն
- Պատասխանատվություն
- Ինքնակառավարման արդյունավետություն
- Կարեկցանք և հոգատարություն մարդկանց և աշխարհի նկատմամբ
- Պատասխանատու և բարոյական լինելու դիրքորոշում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթները կարևոր դեր ունեն բոլորի կյանքում, դրանք ուղեկցում են ցանկացած անհատի դեռ մանկուց։ Դրանք միշտ սովորեցնում են հավատալ, երազել, լինել լավագույնը, դառնալ ավելի բարի և օգնող։ Մանկավարժական տեսանկյունից ևս հեքիաթները հիանալի և արժեքավոր աղբյուր են. աշակերտները սիրով և մեծ ոգևորությամբ են կարդում հեքիաթները, իսկ այդ նույն հեքիաթը, երբ դիտում են, որպես մուլտֆիլմ, նրանց ոգևորությունը նկարագրելն անհնար է։

Ավարտելով հետազոտական աշխատանքը՝ եկա հետևյալ եզրակացություններին.

1. Հեքիաթն իրականացնում է կրթական գործընթացի բոլոր սուբյկտների կարևորագույն որակների ձևավորման գործառույթները։
2. Հեքիաթը հեշտացնում է միջանձնային փոխհարաբերությունների համակարգի գիտակցումը և նվազեցնում է բացասական տպավորությունների ազդեցությունը։

3. Հեքիաթի լեզուն լինելով մարդկային փոխհարաբերությունների հիմնական լեզուներից մեկը, ապահովում է ստեղծագործական կարողությունների բացահայտումը: Հեքիաթի միջոցով սեփական պատկերացումների արտահայտումը նպաստում է աշակերտի ինքնագիտակցության զարգացմանը:
4. Հեքիաթներն արթնացնում են երևակայությունը, դուռ են բացում դեպի անճանաչելին, միավորում են մարդկանց և, ի վերջո, զարդարում են կյանքը: Հեքիաթը դառնում է կապող օղակ ուսուցչի և աշակերտի միջև:
5. Չնայած տեխնոլոգիական առաջընթացին, որը հեքիաթը դարձնում է իրականություն, երեխաները ձգտում են կախարդանքի ու հրաշքի: Եվ դա զարմանալի չէ: Չէ՞ որ հեքիաթներն արթնացնում են երևակայությունը, դուռ են բացում դեպի անճանաչելին, միավորում են մարդկանց և, ի վերջո, զարդարում են կյանքը:

Այսպիսով, վերջում հավելենք այն, որ շատ կարևոր է ուսուցչի և աշակերտի միջև լինի դրական հաղորդակցություն և համագործակցություն: Քանի որ կրտսեր դպրոցականները 6-9 տարեկան մանուկներ են, հարկավոր է զգույշ լինել նրանց մանկության հետաքրքրությունների հետ և թույլ տալ, որ երեխան իր հոգու մաքրությամբ որքան հնարավոր է երկար ապրի հեքիաթային աշխարհում, որովհետև կյանքը, այնուամենայնիվ, լի է բազմաթիվ դժվարություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Т. Д. Зинкевич – Евстегнеева - '' Основы сказкотерапии''.
2. О. В. Хухлаева – ''Лабиринт души''
3. Е. В. Чех – ''Я сегодня злюсь, расскажи сказку''
4. Լ.Դ. Կորոտկովա-Հեքիաթաթերապիան դպրոցում: Մեթոդական ցուցումներ